

41. **Գարրիել Դայիր** (Բարսեղեան). — Սերաստացի Տիրացու Բարսեղի զաւակն է ինք : Տպած է միայն 2 գիրք , 1745 ին՝ Նալեան Յկր. Պատր.ի «Մեկնութիւն աղօթից ներքողինաց Ս. Գրիգորի Նարեկացւոյն» և 1750 ին «Գիրք պատճառաց Արիստոտելին» : — Իսկ իր միւս եղբայրները՝



42. **Աարգիս եւ Աիքայել Դայիր** (Բարսեղեան կամ Սերասեանց) 1747 ին մէկ գիրք միայն դրոշմած են , Նալեան Յկր. Պատր.ի «Աշխարհարատ. Գրիստոնեական» (Բ. տիպ) , որուն Յիշատակարանին մէջ նարագատնին՝ Գարրիէն ալ կը յիշեն :



43. **Աբրահամ Դայիր** Թրակացի . — Ծնողքն էին Սարգիս և Ազիզ , իսկ նոգեւոր եղբայրը՝ Կեսարացի Գեորգ դպիր : 1737 ին իր «նորակազմ տպարանէն յոյս կ'ընծայէ **Մեսրոպ Մեկ**» «Պատմութիւն երջանիկ վարուց և մանուան . . . մեծին ներսիսի» (նիւթական աջակցութեամբ Պրն. Դանիէլի որդի Տիրացու Մովսէսի) , որուն Յիշատակարանին մէջ կը նանդիպինք «գրքածախ» Յարութիւնի : Աբրահամ Դպիրի դրոշմած ուրիշ գիրքերու Յիշատակարանները կը պարունակեն անունները Սերաստացի Յակոբին ու Բարսեղին , նաեւ Մարտիրոս Դպիրին : Ըսել է՝ ինք վարպետ մը չէր այնքան և արուեստակիցներ օգնած են իրեն : Արուեստին նասկացողութեամբ մասին սա երկտողն տնինք աչքի տալու . «որ իւր իսկ ձեռամբ անձանգիստ աշխատեալ՝ ետ գմուրն սեւարոյր կապարեալ գրոց , ո՛չ հաւատարմով աչոց մշակաց» : Գրաշար ունէր Անուօնը որ սրբագրիչ ալ էր , իսկ աշխատաւոր՝ Խոյնցի Սեւանեան Կարապետ որդի Ինգնատիօսը , նաեւ Յովնանէսը : Իր տպած միւս գիրքերուն համար ձեռնառու եղած է Լափանցի Մոտ. Շաննազար , իսկ ցանկերու պատրաստութեան և սրբագրութեան աշխատող՝ Պաղտատար դպիրը : — Բաց ի առաջինէն՝ նրատարակած է նաեւ հետեւեալ գործերը . — **Դիրմ Դպրութեան** (Տաղարան) 1738 : Զմերան հատոր (Գրիգոր Տաբեացի «Եօթնալոյս վրդպտ.») 1740 : — Ամառան հատոր (Գր. Տաբեացի) 1741 : — **Աստուածադեռ** , 1742 : — **Սարգիս Շնորհալի** «Գիրք մեկնութեան Եօթն բոլոց կարուղիկեից . . . որ կոչի Սարգիս գիրք» , 1743 : **Ոսկեփորիկ** (Գր. Տաբեացի) 1746 : Վերջինս կը պարունակէ Տաբեացիի անյաջող մեկ պատկերը՝ փայտի վրայ փորագրուած :



44. **Տիրացու կամ Զնչին Յովհաննէս** (Աստուածատուրեան) . — Իրեն ու իր զերդաստանին մասին խօսեցանք բառական 32րդ բուհամարով : — Իր անունն ուղղագրուած կը գտնենք երբեմն ՅՕՀԱՆՆԷՍ , կամ ՈՎՀԱՆՆԷՍ : — Տպած է հետեւեալները . — Գիրք պատասխանական սրբոյն Աքանասիոսի (անբուական) : — Յիսուս Որդի : — Տաղասացութիւն (Գր. Մագիսարեան) 1746 : — Ժողովածու գիրք (Ե. տիպ ի Պօլիս) 1747 : — Գիրք սանմանաց յոգնաղիմի իրողութեանց (Երսէն դպիր) : — Պղնձե. քաղաք , 1749 : — Գիրք Տամարաց , 1750 : — Երգարան : — Տաղարան փոքրիկ և համառօտ յորում պարունակին երգք նոգեւորք , 1751 : — Թուղթ Պօղոսի Տարօնեցւոյ : — Գիրք աստիճան տալոյ դպրաց ևն. (ձեռնադրութիւն) : — Ժամագիրք ատենի , 1752 (նաեւ 1762 ին և 1768 ին) : — Յանկգիրք Նոր Կտակարանի , 1753 : — Նարեկ , 1755 (նաեւ 1774 ին) : — Ճրպգ ճշմարտութեան , 1756 : — Վիճարանութիւն բնոյ Յոյնս , 1757 : — Գիրք աղօթից (Նալեան Յկր. Պատր.) 1760 : — Պատմութիւն Ս. Վարդանայ (Եղիշէ) 1764 : — Սաղմոս , 1765 : — Պատմութիւն Ս. Երուսաղեմի (Բ. տիպ) , հեղինակ Հաննա վրդ. , 1767 ևն. , ևն. :

